ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«-----» սեպտեմբերի 2013թ. N –Ա

ՈՐՈՇՈՒՄ

«ԹԻՎ 7 ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ և 20-րդ հոդվածներով, 67-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետով, «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևանի քաղաքապետարանի ենթակայության «Թիվ 7 պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերությունը վերակազմակերպել՝ միացնելով «Թիվ 8 պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերությանը:
2. Առաջարկել Երևանի քաղաքապետին՝ սահմանված կարգին համապատասխան ապահովել «Թիվ 7 պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերության վերակազմակերպման գործընթացի իրականացումը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

««ԹԻՎ 7 ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԱՍԻՆ » ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Թիվ 7 պոլիկլինիկա» ՓԲԸ գտնվում է Կենտրոն վարչական շրջանի Կիլիկիա 4 հասցեում, բնակելի շենքի առաջին հարկում: Ընդհանուր մակերեսը կազմում է 334.2մ^2 , որտեղ մատուցվում են արտահիվանդանոցային բժշկական օգնության ծառայություններ: Պոլիկլինիկայի սպասարկման տարածքի ազգաբնակչության թվաքանակը կազմում է 7771, որից 4067-ը գրանցված են:

Պոլիկլինիկայում կապիտալ վերանորոգման աշխատանքներ իրականացվել են ավելի քան չորս տասնամյակ առաջ, իսկ կոսմետիկ վերանորոգում՝ 1980-ականների սկզբին: Արդյունքում շենքային ոչ բավարար պայմանները, անհրաժեշտ բուժսարքավորումների բացակայությունը հնարավորություն չեն ընձեռում տեղում կատարել ՀՀ ԱՆ կողմից հաստատված չափորոշիչին համապատասխան լաբորատոր-գործիքային հետազոտությունները, ինչպես նաև նեղ մասնագիտացված ծառայությունները ողջ ծավալով: Մասնավորապես Երևանի քաղաքապետի կողմից հաստատված հաստիքացուցակով նախատեսված թվով 22 հաստիքների պայմաններում փաստացի աշխատողների թվաքանակը կազմում է 17: Դրանով է պայմանավորված բուժհաստատության աշխատակիցների կողմից տարբեր նեղ մասնագիտացված ծառայությունների մատուցման համատեղումը: Այսպես՝ տեղամասային թերապևտների կողմից միաժամանակ մատուցվում են նաև նեղ մասնագիտացված նյարդաբանական, ուռուցքաբանական, սրտաբանական, էնդոկրինոլոգիական ծառայություններ, մաշկավեներաբանի կողմից մատուցվում են նաև վիրաբուժական ծառայություններ, իսկ քիթ-կոկորդ-ականջաբանական և ստոմատոլոգիական կաբինետները ընդհանրապես չեն գործում:

Այս պայմաններում ակնհայտ է դառնում, որ բուժհաստատություն չունի համապատասխան ֆինանսական և կադրային ռեսուրսներ ազգաբնակչությանը անհրաժեշտ ծավալի և որակի բժշկական ծառայություններ մատուցելու, ինչպես նաև սեփական ռեսուրսներով զարգանալու համար, ուստի անհրաժեշտ է այն վերակազմակերպել՝ այլ բուժհաստատության հետ միացման ճանապարհով:

Հաշվի առնելով «Թիվ 8 պոլիկլինիկա» ՓԲԸ-ի լաբորատոր-գործիքային հագեցվածությունը, կադրային ներուժը, համապատասխան շենքային պայմանները, սպասարկման առումով տարածքային հարմարավետությունը, ինչպես նաև «Թիվ 7 պոլիկլինիկա» ՓԲԸ տարածքների վերանորոգման և վերազինման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները, նպատակահարմար ենք գտնում «Թիվ 7 պոլիկլինիկա» ՓԲԸ-ն վերակազմակերպել՝ միացնելով «Թիվ 8 պոլիկլինիկա» ՓԲԸ-ին։

Արդյունքում հնարավոր կլինի «Թիվ 7 պոլիկլինիկա» ՓԲԸ տարածքում ձևավորել ընտանեկան բժշկության գրասենյակ, կավելանա ազգաբնակչությանը մատուցվող ծառայությունների անվանացանկը, կբարձրանա ծառայությունների որակը, վճարովի ծառայությունների ծավալները։ Այս պայմաններում հնարավոր կլինի տարածքի ազգաբնակչությանը մատուցել հիմնական ծառայությունների փաթեթով նախատեսված արտահիվանդանոցային ծառայությունների ողջ ծավալը։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

««ԹԻՎ 7 ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԱՍԻՆ » ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

««Թիվ 7 պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերության վերակազմակերպման մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

««ԹԻՎ 7 ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԱՍԻՆ » ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

««Թիվ 7 պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերության վերակազմակերպման մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևան քաղաքի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չեն առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ